

սամբ նաև կրկնութիւնը: Իբրև ժամանակակից պատմուած իրողութիւններ հետաքրքրական են անոնք, որքան ալ ցաւալի ըլլայ գծուած պատկերը:

Կը հրատարակեմ Յիշատակարանս այնպէս ինչպէս օրինակած եմ 1927ին յէջմիածին, սկզբնադրին վրայէն: Դժբախտաբար տեղ տեղ համառօտուած է օրինակութիւնս, ինչպէս բազմակէտները ցոյց կու տան:

Բնագրին մէջ կատարուած է մանր սրբագրութիւններ. ձեռագրին ընթերցուածները նշանակած եմ ստորին լուսանցքի վրայ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՎԱՐԳԱՆԱՅ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ
ԱՐԱՐԱԾՈՅ

Կոիւք Լեհաց ընդ Շուեստ եւ ընդ Թուրքս: — Մուրկուն: — Պատերազմ սուլտան Մուրատի ընդ Պարսս: — Խնդիրք Լեհահայոց. Բռնութիւնք Նիկոլ արքեպիսկոպոսի:

Բայց նօտրեցաւ գիրքս ի դառն եւ անբարի, վշտաշատ ժամանակիս... զի կողմն հիւսուսոյ, որ էր մեծ թախտ եւ հաստատ, հօր եւ զօրեղ թագաւորութիւն, մեծ եւ հին ժամանակաց, զոր յայժմ նկուն եղեալ ի մարտս պատերազմի յոլով կոիւ տլեալ ոչ¹ կարացին զդէմ ունել արի եւ քաջ, յազթող, նորածին թագաւորին Լէհաց վլատիսլաւին. որ սրախոզող արարեալ զանթիւ հեծեալս, զայլս գերեցուցեալ եւ զկէսս հնազանդեցուցեալ եւ ընդ ձեռամբ արարեալ, նաև զթա-

¹ Չեւ. որ: